„Авангард" Ереван
29.08.1984



ՍՈՎԵՏԱՀԱՅ ՆԿԱՐՉԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

ԱՐՎԵՍՏԻ ՄԱՔՈՒՐ ԼՈՒՅՍՈՎ

Վերջերս Մոսկվայում մեծ հանդիսավորությամբ բացվեց Արևելքի ժողովուրդների արվեստի պետական թանգարանի նոր շենքը: «Լուսինների տունը». մոսկվացիներն այսպես են կոչում Սուվորովյան բուլվարի վրա գտնվող 19-րդ դարի 2-րդ տասնամյակում նշանավոր ճարտարապետ Դոմենիկո Ժիլարդիի կառուցած այդ հոյակերտ առանձնատունը:

Նոր թանգարանում առաջինը ցուցադրվելու պատիվը տրված էր ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ ՌՈՒԴՈԼՖ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, մի նկարիչ, որի անունը քաջ հայտնի է արվեստի երկրպագուներին և որի վաստակը բոլորովին վերջերս պսակվեց ՀՍՍՀ ժողովրդական նկարչի բարձր ու պատվավոր կոչումով:

... Ամեն անգամ, նոր աշխատանք սկսելիս, նա հուզմունքով վերհիշում է հեռավոր այն օրը, երբ դեռ տասնհինգ տարեկան էր և Երևանի օպերային թատրոնի զբոսայգում նստած ուրվանկարներ էր անում: Ոգեշունչ աշխատանքի պահին հանկարծ զգաց, որ ինչ-որ մարդիկ թիկունքից ուշի-ուշով հետևում են իրեն: Շրջվեց և նույն պահին լսեց խորհրդավոր արտաքինով մարդու բացականչությունը.

— Տես, Գալենց, սա Լեոնարդո դա Վինչիի ոգու վերածնունդն է:

Այդ մարդը մեծատաղանդ նկարիչ և քանդակագործ Երվանդ Քոչարն էր, որի արվեստանոցը, այդ հանդիպումից հետո, նրա համար բացեց արվեստի աշխարհի շատ գաղտնիքներ:

Երբ մտանք ցուցասրահ, մի երիտասարդ թերթում էր տպավորությունների գիրքը: Նրան մոտեցավ տարեց մի կին և ժպտալով հարցրեց.

— Դե, ինչպես է, շա՞տ են գովում:

— Ոչ,— պատասխանեց երիտասարդը,— գրում են ճշմարտությունը:

Հետո, երբ արդեն մենք էինք թերթում տպավորությունները, հանդիպեցինք տարբեր խոստովանությունների.

«Շնորհակալություն, ձեր ցուցահանդեսը արվեստի տոն է, այստեղ միաժամանակ և ուրախանում ես, և տխրում...»:

«Այնքան հարազատ է նկարչի աշխարհը, այնքան ձգող ու ներշնչող, որ մարդ չի կարողանում, չի ցանկանում հեռանալ, դուրս գալ այնտեղից, իսկ գնալուց հետո երկար ժամանակ իր հետ կրում է այդ աշխարհը: Արդեն երրորդ անգամ եմ այցելում ցուցահանդես և դեռ էլի կգամ...»:

... Առաջին զգացումը, որով համակվում ես Ռ. Խաչատրյանի գործերը դիտելիս, նրա արվեստի ազնվությունն է, մարդկային բնավորությունների ու հոգեվիճակների խոր արտահայտությունը, հավատը, լույսի ու ճշմարտության հավիտենական գոյության նկատմամբ: Նրա ձեռքի վարպետությունն ասես համարժեք է մտքի պլացքին: Աշխարհի խորքային զգացողությունը, կատարողական կուլտուրան, մատուցման ձիրքն ու յուրօրինակությունը, սեղմ, արտահայտիչ միջոցներով բազմերանգության պատրանք ստեղծելու շնորհքը, մարդկային բարդ հոգիների զարմանալի ընկալումը, տեսողության հեռահարությունը և այս ամենի հնչյունային կառուցումն ու գեղարվեստական ամբողջականությունը կազմում են Խաչատրյան-նկարչի ստեղծագործության գաղափարը և հիմքը: Նրա ստեղծած պատկերներում անընդհատ պայծառացող լույս կա, կենդանի շարժում, հոգեբանական տարբեր իրավիճակներ և տարբեր զգացումներ: Ազնվություն և խիզախություն են արտահայտում դիմանկարները:

Ռ. Խաչատրյանի ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում նատյուրմորտները: Նկարիչը կարողանում է առարկաները դնել շարժման մեջ, շունչ հաղորդել նրանց և որոշակի գաղափար տալ անշարժ երևույթներին:

Գնալով ավելի ու ավելի բեղուն է դառնում նկարչի «կախարդական բյուրեղիկը»: Բոլոր նկարիչներն էլ, սկսած այն օրից, երբ վրձին կամ մատիտ են վերցնում իրենց ձեռքը, փնտրում են բնության կողմից իրենց տրված շնորհի արտահայտման ձևը, միջոցը և լեզուն, քանզի քանի դեռ չունես քո ձեռագիրը, միայն քեզ յուրահատուկ դեմքն ու հայացքը, չես հասնի այն բարձունքին, ուր արվեստի բնագավառի մարդկանցից քչերն են հաղթանակում: Ռուդոլֆ Խաչատրյանը այն տառապած երջանիկներից է, ով փնտրել ու գտել է իր տաղանդի արտահայտման ուրույն ոճն ու լեզուն: Սկսած 79 թվականից նա նկարում է լևկասի վրա: Դա մի նյութ է, որի վրա հնում յուղաներկով սրբապատկերներ են նկարել: Հենց իրենց՝ նկարիչների և արվեստաբանների խոստովանությամբ, Խաչատրյան-նկարչի նորարարությունն այն է, որ նա լևկասի վրա սեպիայով ուրվանկար ստեղծելով, համատեղել է անհամատեղելին՝ լևկասը և ուրվանկարը:

Մասնագետները դեռ շատ կանդրադառնան այս երևույթին: Իսկ նա շարունակում է իր բացած արահետով շարժվել առաջ, նկարում է նոր ներշնչանքով, իր հերոսներին թրծելով սեփական հոգու քուրայում, նրանց հաղորդելով նաև իր հոգու լույսը:

ՎԱՆՈՒՇ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

Ռուդոլֆ Խաչատրյան.— *«Մոկո»:*
«Նատյուրմորտ. արվեստ»:
«Աքու Լալա Մահարի»: